ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *չի*.**

1) գամ-ռ, ար-շիռ, հարածու-, թրմ-ալ
2) խա-շիկ, կո-վել, ամ-շող, խա-անել
3) շամ-ուր, ալեծու-, դա-նեպսակ, ոսկեծո-
4) տար-ողել, թար-, ճամ-ա, թա-ք

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *իա*.**

1) խավ-ր, Երմոն-, Եղ-զար, Բուն-թ
2) միմ-յն, հր-կան, կր-, Բեն-մին
3) Անդր-ս, Երեմ-, քիմ-, ակադեմ-
4) օվկ-նոս, փաս-ն, Կիլիկ-, Զաքար-

3 **Շարքերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

- դափնեվարդ, հափշտապ, հափշտակել, ժայռակոփ
- ծոպավոր, խոփան, մռմռալ, սեպուհ
- շամբուտ, դարբին, մինչև, սրտատրոփ
- ճամպրուկ, ըմբշամարտ, սփրտնել, դափնի

1) մեկում
2) երեքում
3) բոլորում
4) երկուսում

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին վանկը *չի* շեշտվում.**

1) թրըմփ, կատու, վագր, բաց անել
2) մանր, արծաթագույն, գրադարան, Լոռի
3) որերորդ, միմիայն, ցույց տալ, կարծր
4) միթե, իններորդ, զբոսայգի, ծաղկափթիթ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

1) արգելել, շանթարգել, խոչընդոտել, կաշկանդել
2) դեռափթիթ, մատղաշ, մանկամիտ, պատանի
3) անիմաստ, անմիտ, անկաշկանդ, անհեթեթ
4) վարագուրել, քողարկել, թաքցնել, սքողել

6 **Ո՞ր շարքի *ոչ* բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) հետամտել-խուսափել, սեղմ-ծավալուն, ձեռնտու-անշահավետ
2) երկնասլաց-գետնամած, ժուժկալ-անզուսպ, լայնախոհ-նեղմիտ
3) գժդմնել-ժպտալ, մարդատյաց-մարդասեր, մարմնեղ-վտիտ
4) նահանջել-ընկրկել, լռակյաց-շաղակրատ, նենգ-ազնիվ

7 **Ո՞ր տարբերակում է համանուն բառերից մեկը սխալ բացատրված:**

1) ***անել*** – ամուսնու եղբայրը, ***անել*** – անել բայի ըղձական բայաձև
2) ***չկամ*** – անբարյացակամ, ***չկամ*** – ***կամ*** բայի ժխտական խոնարհման բայաձև
3) ***պապ*** – ծնողի հայրը, ***պապ*** – կաթոլիկ եկեղեցու առաջնորդը
4) ***տալ*** – հանձնել, ***տալ*** – ամուսնու քույրը

8 **Աջ շարքի բացատրությունները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. թեզանիք	1. ապահով, խաղաղ
բ. քուրջ	2. ուշադիր, սևեռուն
գ. անքույթ	3. շորի փեշ
դ. անքթիթ	4. հնամաշ զգեստ
ե. քղանցք	

1) ա-3, բ-4, գ-2, դ-1
2) ա-3, բ-4, գ-1, դ-2
3) բ-4, գ-1, դ-2, ե-3
4) բ-4, գ-2, դ-1, ե-3

9 **Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են ենթարկվում ներքին հոլովման:**

1) անկյուն, գարուն, որսաշուն
2) նուռ, կնքահայր, տուն
3) անուն, շարասյուն, լիություն
4) փոստատուն, աստվածամայր, մանուկ

10 **Քանի՞ ածական կա տրված հատվածում:**

Բայց շուտով հասակավոր հայրերն ու մայրերը սկսեցին հոգնել, իսկ մյուս մասնակիցները դեռ ուրախ-ուրախ ծիծաղում էին: Քաղցրեղենը բերելու ժամանակ ընթրողների տրամադրությունն այնքան բարձր էր, որ ոչ ոք չնկատեց չքնաղ Ադելինայի և Պետրոսի՝ միմյանց հետ փոխանակվող քաղցր ժպիտները, գողտրիկ սիրախոսությունները:

1) ութ
2) վեց
3) հինգ
4) յոթ

11 **Ո՞ր նախադասության մեջ սահմանական եղանակի բայաձև *չկա:***

1) Ես ուզում եմ, որ պարապը լցվի լացով,
   Բայց ոչ թե մոր, այլ մանուկի:
2) Նա լինում էր ամենուր և ամենուր արժանանում պատվի ու հարգանքի:
3) Եվ մի՞թե այդ վշտիդ համար
   Չեմ սիրում քեզ այդպես քնքուշ
   Եվ խոնարհվում քեզ պես համառ,
   Օ՜, հայրենի՛ք՝ դառն ու անուշ:
4) Լիներ այնպես, որ քայլեր իր հայրենի դաշտերով ու ծաղիկների մեջ գլուխը թաղած՝ իր վերջին շունչը տար:

12	**Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ապառնի ժամանակով:**

1) տեսանք, զմայլվելու եմ, չեմ կանգնեցնի, արգելեն
2) գնալու է, լինի, կհասցնես, չերգեմ
3) կարդայինք, մոտեցնեմ, պահանջեք, որոշել է
4) փախչեմ, չտանի, դառնան, խաղալու էի

13	**Ո՞ր նախադասության մեջ կապի գործածության սխալ *չկա:***

1) Հարցի լուծումը տվյալ դեպքում տնօրենի հետ է կապված:
2) Նա իրեն համար հանգիստ կարդում էր, երբ հարևանը գրգռված ներս խուժեց ու սկսեց գոռգոռալ:
3) Նրան հանգամանորեն ծանոթացրին իմ դիմումի հետ:
4) Անհրաժեշտ է, որ բոլորը շատ նրբորեն մոտենան մեր անցյալի նկատմամբ:

14	**Ո՞ր տարբերակում է ընդգծվածը նախադասություն:**

1) Նա որոշեց բարձրանալ տուն՝ **մի փոքր հանգստանալու:**
2) Ինքը բժիշկ էր՝ մի փոքրիկ թագավորության տեր, **մենք՝ այդ թագավորության բնակիչները:**
3) Իսկ աղջիկները, **գույնզգույն ծաղիկներ հավաքելով,** ծաղկեպսակներ էին սարքում:
4) **Այգիների մեջ կորած լայնարձակ դաշտը կարծես** դրախտ լիներ:

15	**Ընդգծվածներից ո՞րը որոշիչ *չէ:***

1) Քո հայրը մեր ժամանակի **ճանաչված** բանաստեղծներից մեկն է:
2) Ես **հինգ հազար** մղոն հեռացել եմ տնից, միշտ հեռու եմ եղել և միշտ կլինեմ:
3) Ես կուզենայի ձեզ համար մի նոր երգ նվագել **այս** ոսկեփող շեփորով:
4) Նա լուռ ու **հանդարտ** կանգնել էր արտի եզրին:

16	**Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ստորոգելի**:

1) **Երեկո** է իջել և լռությամբ պարուրել շրջակայքը:
2) Մեզ խենթացնողը գարնանային անուշ **առավոտն** էր:
3) Աշուն է, օրերը **ցրտում** են:
4) Մեզ ասել են, որ պարապմունքը **վաղն** է լինելու:

17	**Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Ես ասացի, որ նորություն չունեմ, և սկսեցի զննել սենյակը, որ մի շատ աղքատիկ, անզարդ և նույնքան էլ մութ սենյակ էր:

1)


2)


3)


4)


18	**Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

1) Մի՛ անհանգստացիր, ես վարձահատույց կլինեմ քեզանից:
2) Պարզվեց, որ ռուսական գիմնազիան իրոք ոչինչ չի տալիս ավարտողներին, բացի «հասունության վկայականից»:
3) Հուշ-երեկոյի ժամանակ ներկաները կրկին զմայլվեցին մեծ դերասանի խաղացած դերերի դրվագներով, որոնք անընդհատ հայտնվում էին էկրանին:
4) Դատական գործի այդ դրվագով փաստաբանը փորձում էր ցույց տալ իր պաշտպանյալի անմեղությունը:

19	**Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ**:

Պապը ասաց իր պալատականներին, որ Շապուհը որոշել է իրենց հանգիստ չտալ, և իրենք կանեն այն, ինչ պարտավոր են:

1) Պապը ասաց իր պալատականներին.
   - Շապուհը որոշել է մեզ հանգիստ չտալ, և դուք կանեք այն, ինչ պարտավոր եք:
2) Պապը ասաց իր պալատականներին.
   - Շապուհը որոշել է մեզ հանգիստ չտալ, և մենք կանենք այն, ինչ պարտավոր ենք:
3) Պապը ասաց իր պալատականներին.
   - Շապուհը որոշել է ձեզ հանգիստ չտալ, և մենք կանենք այն, ինչ պարտավոր ենք:
4) Պապը ասաց իր պալատականներին.
   - Շապուհը որոշել է ձեզ հանգիստ չտալ, և դուք կանեք այն, ինչ պարտավոր եք:

20	**Ո՞ր նախադասության մեջ միջակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նա որոշել էր թե ինչ ասի տնօրենին երեխաները մեծացել են ընդարձակ բնակարան է պետք թանկարժեք կահկարասի:
2) Դպրոցում մեզ վայելչագրության յուրատեսակ ձև էին սովորեցնում և մենք աշակերտներս գրում էինք մանր-մանր տառերով դա ամենևին դուր չէր գալիս հայրիկին:
3) Հայաստանը մի շարք մայրաքաղաքներ է ունեցել Դվին Անի Արտաշատ Արմավիր և այլն:
4) Իրադարձությունները սկսվեցին հետևյալ կերպ Զարուհի անունով օրիորդի մոտ «խռովարարական թղթեր» հայտնաբերեցին ու նրան ձերբակալեցին:

21	**Պնդումներից ո՞րը ճիշտ *չէ* «Հայկ և Բել» վիպերգի վերաբերյալ:**

1) Կռվում, երբ ահաբեկված Բելը հետ է քաշվում և ցանկանում ամուր դիրք գրավել, Հայկը, կռահելով նրա միտքը, նետվում է առաջ, ուժգին արձակում երեքթևյան նետը և սպանում Բելին:
2) Երբ Տիտանյան Բելին հաջողվում է ամբողջ երկիրը գրավել, Հայկը, չկամենալով հնազանդվել բռնակալին, իր ամբողջ գերդաստանով հեռանում է Բաբելոնից և բնակություն հաստատում Արարադի երկրում:
3) Բելը կեղծ խոսքերով շողոքորթում է Հայկին և նրա հետ իբր բարեկամական կապեր հաստատելու համար խնդրում է նրա քրոջ ձեռքը:
4) Հայկը Բելի պատգամավորներին հետ է դարձնում՝ խստությամբ մերժելով Բաբելոնի տիրոջ առաջարկները:

22 **Բառերի տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Երկնէր ....., երկնէր .....,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և
…….. եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ..... ելանէր,
Ընդ եղեգան փող ..... ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր …… պատանեկիկ…

(1. ծուխ, 2. զկարմրիկն, 3. երկիր, 4. խարտեաշ, 5. բոց, 6. երկին)

1) 3, 6, 4, 2, 1, 5
2) 6, 3, 2, 1, 5, 4
3) 3, 6, 4, 5, 1, 2
4) 6, 3, 4, 5, 2, 1

23 **Բնութագրումներից ո՞րը նշված գրողներից ում է վերաբերում:**

ա. Միջնադարյան հայ սոցիալական քնարերգության սկզբնավորողն ու խոշոր ներկայացուցիչն է:
բ. Միջնադարյան հայ տաղերգության վերջին խոշոր ներկայացուցիչն է:
գ. Սկիզբ է դրել առակավոր ճառի տեսակին:
դ. Հայ նոր գրականության հիմնադիրն է:

1. Խաչատուր Աբովյան
2. Վարդան Այգեկցի
3. Սայաթ-Նովա
4. Ֆրիկ

1) ա-2, բ-3, գ-4, դ-1
2) ա-1, բ-3, գ-2, դ-4
3) ա-4, բ-3, գ-1, դ-2
4) ա-4, բ-3, գ-2, դ-1

24 **Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի տրված հատվածը ո՞ր հերոսին է վերաբերում:**

«Նա չդիպավ աղքատիկ ճաշին, որ բերել էին նրա համար, միայն վեր առեց խեցեղեն ամանը, խմեց ջուրը՝ փոքր-ինչ զովացնելու սրտի տապը: Հետո անցավ, ընկողմանեց յուր հարդյա անկողնի մեջ: Նա դարձյալ շարունակեց նայել անշարժ արձանի վրա: Թավամազ դեմքը արտահայտում էր և՛ զայրույթ, և՛ ապաշավանք: Զայրո՛ւյթ, որ այդպես տմարդի վարվեցավ յուր հետ Արյաց արքան: Ապաշավա՛նք, որ ինքը հարթեց յուր կործանման ճանապարհը»:

1) Վասակ Մամիկոնյանին
2) Ներսես Մեծին
3) Արշակ Երկրորդին
4) Սամվելին

25 **Ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

«Ծանր ու ճնշող է այդ քաղաքի արտաքին տպավորությունը: Հեռվից դիտողին նա իր տափակ տանիքներով, մերկ փողոցներով պատկերանում է այնպես, որ կարծես մի սոսկալի հրդեհ լափել է բոլորը, ինչ որ կարող է լափել կրակից, և թողել է մի վիթխարի կմախք»:

1) Ալ. Շիրվանզադե. «Քառս»
2) Հ. Թումանյան. «Գիքոր»
3) Դ. Դեմիրճյան. «Ավելորդը»
4) Նար-Դոս. «Նեղ օրերից մեկը»

26 **Խոսքերից ո՞րը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսինն է:**

ա. «Ամեն մարդ պիտի իմանա վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս. ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագետ, ուսումնական, դաստիարակյալ, կրթյալ և այլն մեկը, և յուրաքանչյուր կնիկ պիտի ըսե իր էրկանը. «Մեր աղջիկը սա Աբիսողոմ աղային տանք»:
բ. «Թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան»:
գ. «Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ կա. բարձր դասեն, միջին դասեն և ստորին դասեն»:
դ. «Ձեզիպեսներն կարգվելու են, որ ազգերնուս մեջ հարուստ տղայք շատնան: Աղվոր աղջիկ կը փնտռեք կոր եղեր… և ինչո՞ւ չփնտռեք. ես ալ ձեր տեղն ըլլայի նե ես ալ կը փնտռեի»:

1. տիկին Շուշան
2. քահանա
3. Աբիսողոմ աղա
4. Մանուկ աղա

1) ա-3, բ-4, գ-1, դ-2
2) ա-1, բ-2, գ-3, դ-4
3) ա-3, բ-1, գ-4, դ-2
4) ա-4, բ-2, գ-3, դ-3

27 **Փակագծում տրված բառերի տեղադրման ո՞ր հերթականությունն է ճիշտ:**

Երբ սէրն ի յաշխարհ եկաւ, եկաւ իմ սիրտը .....,
Ապա յիմ սրտէս ի դուրս՝ յերկրորէ յերկիր .....,
Եկաւ ի գլուխս ելաւ, ի ըղեղս ելաւ .....,
Աչիցս արտասուք ուզեց, նա արիւն ի վար .....:

(1. թառեցաւ, 2. վաթեցաւ, 3. բնակեցաւ, 4. թափեցաւ)

1) 3, 4, 1, 2
2) 2, 4, 1, 3
3) 4, 3, 1, 2
4) 3, 4, 2, 1

28 **Ո՞րն է Եղիշե Չարենցի «Վահագն» պոեմի հիմնական գաղափարը:**

1) Գողթան երգիչների բանաստեղծական ձիրքի գովերգումը
2) գորշ իրականության մեջ երազող մարդկանց չհասկացված լինելը
3) իրական Հայաստանի փոխարեն առասպելական Հայաստան տեսնողների դեմ ընդվզումը
4) ամպրոպի աստված Վահագնի ուժի և հզորության փառաբանումը

29 **Թվերի ո՞ր դասավորությունն է արտացոլում նշված ստեղծագործությունների ստեղծման ժամանակային ճիշտ հաջորդականությունը:**

1. «Մթնշաղի անուրջներ» (Վ. Տերյան)
2. «Տաղարան» (Ե. Չարենց)
3. «Սարսուռներ» (Դ. Վարուժան)
4. «Երգեր ու վերքեր» (Ավ. Իսահակյան)

1) 4, 1, 3, 2
2) 3, 1, 4, 2
3) 4, 1, 2, 3
4) 4, 3, 1, 2

30 **Ձախ շարքում տրված են տողեր բանաստեղծություններից, աջում՝ հեղինակների անունները: Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Ու թող գա՛, թե կա, ավելի՛ չար բոթ,
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:
բ. Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ-
Տա՜մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
գ. Տեսան շքեղ մեր ապագան, անընկճելի ազատ ոգին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած
Թուր-Կայծակին:
դ. Կուզեի նստել մի քարի վրա,
Եվ անվերջ նայել իմ Արարատին,
Հարբել հայրենի միրաժով նրա
Եվ հավերժ նայել իմ Արարատին:

1. Ե. Չարենց
2. Վ. Տերյան
3. Հ. Շիրազ
4. Ավ. Իսահակյան
5. Հ. Թումանյան

1) ա-2, բ-3, գ-4, դ-5
2) ա-1, բ-3, գ-4, դ-2
3) ա-2, բ-1, գ-4, դ-3
4) ա-1, բ-5, գ-3, դ-2

31 **Ո՞ր պնդումն է սխալ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի վերաբերյալ:**

1) Օտար միջավայրն ու բարքերը չեն ազդում ֆրանսիացի չդարձած Պետրոսի վրա, և նա Նենեթի մահից հետո հայերենով արտասանում է «Հայր մեր»-ը:
2) Հեղինակը դիտարկել է Ֆրանսիայում նոր-նոր ձևավորվող հայ գաղութի կյանքը:
3) Վեպում պատկերված են օտարության մեջ հայտնված հայ մարդկանց սիրո և բարոյականության խնդիրները:
4) Վեպում ազգային ակունքներից նահանջի և հայապահպանության խնդիրներն արծարծված են Պիեր-Նենեթ դրամատիկ սիրավեպին համաձույլ:

32 **Տրված հատվածում գեղարվեստական պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված:**

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկնքի մթնած ամպերից իջներ,
Ինչպես փոթորիկ՝ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:

1) անձնավորում
2) համեմատություն
3) բաղաձայնույթ
4) հակադրություն

33 **Բառերից քանիսո՞ւմ երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

դրժել, ատենադպիր, պաշտոնական, ստուգատես, ձնծաղիկ, առերևույթ, թյուրիմացություն, քնքշասիրտ, քառակուսի, կտցահարել:

34 **Հոմանիշների քանի՞ եռյակ կարող է կազմվել տրված բառացանկից.**

մեծարել, երկարաբանել, մեծանուն, ասպախումբ, փառաբանել, ջատագովել, դատարկախոսել, համբավավոր, ճամարտակել, երևելի, գետաձի, վարգաձի:

35 **Բառերից քանիսի՞ հոգնակի թիվն է սխալ կազմված.**

խցանահաներ, կողմնացույցեր, մաքսատներ, վերջնագիրներ, հետախույզեր, գրաբերներ, հարացույցներ, կարմրահերներ, օրապահներ, սպիեր, վիպագրեր, բաղաձայներ:

36 **Տարբերակներից քանիսո՞ւմ ենթակա ստորադաս նախադասություն կա:**

- Երևում է՝ դուք ինձ լավ չհասկացաք:
- Վստահ եմ, որ քեզ լավ ապագա է սպասվում:
- Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ:
- Ինքնըստինքյան հասկանալի էր, որ նա իրեն վեր էր դասում բոլորից:
- Ամեն կերպ փորձում էի, որ հանգստացնեի նրան:

37 **Նախադասություններից քանիսո՞ւմ բուք պիտի դրվի:**

- Իմ դիմանկարչիս սովորության համաձայն խոսեցնում եմ որ չձանձրանա չկորցնի ակտիվությունը խոսեցնում եմ իրեն հուզող թեմաների շուրջ:
- Գետը իր ճանապարհին հանդիպելով սանդղավանդի գահավիժում է հարյուր քսան մետր բարձրությունից և գոյանում է մի փրփրահորդ ջրվեժ որի լայնությունը հազար ութ հարյուր մետր է իսկ ջրի անընդմեջ ծախսը մեկ վայրկյանում հավասար է հազար չորս հարյուր խորանարդ մետրի:
- Լիվինգստոն քաղաքում դեռևս զգացվում է ջրվեժի զովություն պարգևող շունչը:
- Երբ քամի է փչում ծիածանը տարրալուծվում է իսկ ջրի փոշին տարածվում մի քանի կիլոմետր և ցած թափվում հորդ անձրևի պես:

38 **Տրվածներից քանի՞սն են սխալ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ:**

- «Գելը» ստեղծագործության մեջ հեղինակը ներկայացնում է գայլերի մասին պատմություններ, որոնց անմիջական մասնակիցն ու պատմողը հենց ինքն է:
- «Հայրենիքիս հետ» բանաստեղծության մեջ հեղինակը Հայաստանը բնութագրում է «ողբի», «որբի», «զարկված» ու «զրկված» հայրենիք՝ մեր ողբերգության պատճառը համարելով անմիաբանությունը:
- «Անուշ» պոեմում կա «անցվոր ախպոր» կերպարը, որը «աշխարհի կարգն» է հիշեցնում դժբախտ Անուշին, ինչը, սակայն, Անուշը չի ընդունում:
- «Թմկաբերդի առումը» պոեմում մահամերձ Թաթուլը կնոջ մատնության մասին իմանում է վերջին պահին, երբ իր զինվորների մեծ մասն արդեն սպանված էր:

39 **Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերում ածանցի հնչյունափոխություն կա.**

1. համբուրել, թաքստոց, անձկություն, երգչախումբ
2. ուսուցչանոց, կառուցվածք, պատմագիր, գործնական
3. անասնապահ, սառցադաշտ, վերջնական, հայրենադարձ
4. գիշատչային, վերնախավ, հատկություն, եղջերավոր

40 **Նշել այն բառակապակցությունների համարները, որոնք դարձվածային իմաստ *չունեն*.**

1. արևի երես տեսնել, 2. արևի ձայնն ածել, 3. արևով երդվել, 4. արևը թեքվել,
5. արևը վկա, 6. մեկի արևը օրհնել, 7. արևից սևանալ, 8. արևը սևանալ, 9. արև բացվել:

41 **Տրվածներից որո՞նք են պարզ դիմավոր ձևեր.**

1. մի՛ հաշտվիր, 2. պետք է հասցնի, 3. գալիս է, 4. չէիր գա, 5. չես հաշտվի,
6. պիտի հեռանաս, 7. չհաշտվես, 8. չպետք է մոռանաս, 9. չէր հասցնի:

42 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական սխալ ձևեր կան:**

1. Չնայած խեղդող շոգին՝ օրիորդն առանց հովանոցի էր, հերարձակ ու քայլելուց էլ մի տեսակ ծիծաղելիորեն թափահարում էր ձեռքերը:
2. Նա բացեց պատուհանի փեղկը, և ներս խուժեց սթափեցնող սյուքը՝ բերելով խոնավ հողի բույրը:
3. Առօրյա դժվարություններից խոսելիս լսելի էր, թե ինչպես են ալիքները խփվում իրենց խոչընդոտող քարերին:
4. Երիտասարդը լիովին գրավվեց այդ յուրօրինակ տեսարանով և սկսեց ապշած նայել աղջկան, որը գալիս էր ճիշտ իր կողմը:
5. Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար, Զգալ, որ դու կաս, և լինել հեռու:
6. Փոքրիկին վախացնող շունը անակնկալ դուրս թռավ բնից ու սկսեց հաչել:

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծվածը դերբայական դարձված է:**

1. Եթե **կամաց քայլելով** ես ջուրը մտնում, ուրեմն լողորդ չես:
2. **Հոսանքի արագ փախուստից** մյուս ափը մեզ անսահման հեռու էր թվում:
3. Բայց իմ պապը **տեղում հանգիստ նստողներից** չէր. նա անպայման պետք է մի բան աներ:
4. Նրանք ժամանակին ջանք ու եռանդ չէին խնայել իրենց **ուտելու դեղատոմսերը** նախապատրաստելու համար:
5. Եթե ամռանը ծանծաղուտը խանգարում էր **խոտերի վրա շունչ առնելուն,** ապա մենք տեղափոխվում էինք մյուս ափ:
6. Հին պատմության ուսուցչուհին շատ գոհ էր **այս աննշան թեմայի շուրջ արտասանված** հարուստ ճառից:

44 **Նշել թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:**

1. Հայաստանում այսպիսին էր դրությունը, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարյալ շփոթ: Մայիսի 26-ից հետո հայ-վրացական հարաբերությունները լարվել էին ծայրաստիճան. վրացիները, արբած իրենց անկախությամբ ու գերմանական հովանավորությամբ, թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք էլ իրենց հերթին վրացիներին համարում էին դավադիր, իրենց բարեկեցությունը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող:
2. Այսպես վարվելու հիմքերը զորավոր էին. զարհուրելի էր կյանքը, և անկախությունն այդ օրերին թվում էր հեգնանք: Փաստորեն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12000 քառ. կիլոմետր, աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մեջ, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիվանդություն, լաց ու թշվառություն, կոտորած ու սարսափ:
3. Հրի ու սրի միջով անցնելով՝ Հայաստանը ձեռք բերեց անկախություն և կոչվեց անկախ կյանքի: Ցնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը: Ընդհակառակը, շատերի կողմից այն դիտվում էր անժամանակ ծնունդ: Ոմանք չէին հավատում նրան. «անկախություն» ու «հանրապետություն» բառերը դնում էին չակերտի մեջ:
4. Անկախության առաջին իսկ օրից վրաց կառավարությունն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրույթ արտահայտել, որ Վրաստանի հողի վրա շարունակում է մնալ օտար պետության մի իշխանություն: Հայերին ուղղվում էին աներկդիմի խոսքեր, թե նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երևանը: Եվ դա այն պահին, երբ ամեն հաղորդակցություն Երևանի հետ կտրված էր, և Լոռու ու Փամբակի ձորերում թուրքերն ու տեղի մահմեդականները մաքրագործում էին հայկական գյուղերը:

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Որոշիչը կարող է արտահայտվել հարակատար և համակատար դերբայներով:
2. Հետադաս որոշիչը միշտ արտահայտվում է բառակապակցությամբ:
3. Որոշիչը կարող է արտահայտվել գոյականի գործիական հոլովով:
4. Որոշիչը կարող է արտահայտվել անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ դերանուններով:
5. Որոշիչը չի կարող հանդես գալ բառակապակցությամբ:
6. Որոշիչը կարող է հանդես գալ կապական կառույցներով:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Ծառաները, միմ-անց(1) հրմշտելով, փսփսու-ով(2) կ-կտուր(3) բառեր փոխանակելով, շփեր-(4) շարժումներով ներսուդուրս էին անում: Սանդու-քի(5) առաջ կանգ էին առնում կա-քեր(6)՝ բերելով կարծես ու-տի(7) եկող ազգականներին՝ կեղծ վշտակ-ության(8) արտահայտությունը դեմքերին: Շուտով ներս մտավ մի մարդ՝ մոտ վա-ուն (9) տարեկան, արհամար-ական(10) ժպիտը դեմքին:

1) 1 - հ, 2 - կ, 3 - ծ, 4 - դ, 5 -խ , 6 - ր, 7 - ղ, 8 - ց, 9 - ց,10 - -
2) 1 - յ, 2 - ք, 3 - ց, 4 - թ, 5 - ղ, 6 - ռ, 7 - խ, 8 - ց, 9 - թս,10 - հ
3) 1 - հ, 2 - ք, 3 - ծ, 4 - դ, 5 - խ, 6 - ռ, 7 - խ, 8 - ծ, 9 - ց,10 - -
4) 1 - յ, 2 - ք, 3 - ց, 4 - թ, 5 - ղ, 6 - ռ, 7 - ղ, 8 - ծ, 9 - թս, 10 - հ

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում *անջատ.***

1) մեջք(մեջքի), ի(բարօրություն), քար(կոծել), դիցուք(թե)
2) Նոր(Ջուղա), թփից(թուփ), ջուր(ծեծել), օրն(ի)բուն
3) ի(սրտե), փոքր(ի)շատե, տնից(տուն), մեծ(մասամբ)
4) վաղուց(ի)վեր, երկու(երրորդ), ավար(առնել), տեղի(տալ)

48 **Տրված բառերից քանիսո՞ւմ մեկից ավելի հնչյունափոխություն կա.**

մրցակցություն, հրակայուն, կարծրանալ, շրթներկ, ծնրադրել, շրջադարձ, մտացրիվ, վշտաբեկ, սնամեջ, բռնակցում:

1) հինգում
2) չորսում
3) երեքում
4) երկուսում

49 **Փակագծերում տրված բառերից կամ բառաձևերից մեկը տվյալ նախադասությանը համապատասխանում է, մյուսը՝ ոչ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. Մինչև այժմ էլ չեմ կարողանում (1. ըմբռնել, 2. ընկրկել) մորս սիրո խորությունը:
բ. Նրա գերեվարության ու կուրացման մասին վկայությունները մեծ մասամբ վիպական-բանաստեղծական են և չեն կարող (1. հիրավի, 2. հավաստի) ու պատմական լինել:
գ. Սաստիկ այրող (1. խոյակ, 2. խորշակ) է փչում. կխփի, կխարկի արտ ու արոտ:
դ. Խավոտ վարագույրները զով էին պահում արձակ սենյակները, երկու (1. պնակ, 2. ըմպանակ) սուրճը հանգչում էր փոքրիկ սեղանին:

1) ա-2, բ-2, գ-1, դ-1
2) ա-1, բ-1, գ-2, դ-1
3) ա-1, բ-2, գ-2, դ-2
4) ա-2, բ-1, գ-2, դ-2

50 **Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:**

1) ***դարակազմիկ*** – դարաշրջան կազմող, նշանավոր, ***մախաք*** – մեծ ասեղ
2) ***ասպար*** – պաշտպանական զենք, ***իմաստակ*** – խելացի մարդ
3) ***հոլանի*** – մերկ, բաց ուսերով, ***հրովարտակ*** – թագավորի գրավոր դիմում
4) ***եռոտանի*** – երեք ոտք ունեցող, ***դերձան*** – կարի թել

51 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Իր վատ արարքի համար նա մեղանչեց ընկերոջ առաջ:
2) Ես տեղի տվեցի մորս հորդորներին և այլևս չանհանգստացրի այդ աղջկան:
3) Ինչ վերաբերում է կրթաթոշակին, այդ հարցին դեռ կանդրադառնանք:
4) Ֆիզիկական լավ պատրաստականությունը անչափ կարևոր է զինվորի համար:

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի ածանց կա:**

1) ամենաէական, աղտոտություն, հետմիջօրե, դյուրընթեռնելի
2) ընդհատակյա, խոտհարք, առհավատչյա, ընդհանուր
3) առժամանակ, համատեղում, անկայուն, խորհրդածություն
4) անհաղթելի, առհասարակ, սեթևեթանք, ոսկերչական

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրանիշ գոյականներ:**

1) հավատարմագիր, ծաղկատոն, կիզակետ, բաժնետոմս
2) տոհմածառ, հենապյուն, պատվիրակ, պտուտակ
3) հակինթ, դիտորդ, կողմնակից, բաժակ
4) զորաերթ, սպա, անապատական, տառեխ

54 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ *չկա:***

1) Շուտով տղան մեծանում է և դառնում հայտնի արհեստավոր:
2) Նա լռեց, հառաչեց՝ դեմքը ուղղելով դեպի անորոշ տարածություն:
3) Ա՜խ, սինյո՛ր, եթե միջոց ունենայի, կսովորեի թավջութակ նվագել ու կմտնեի երաժշտական խումբ:
4) Գործ շատ կար. ծրագրեր էի վաճառում, բեմում տարբեր աշխատանքներ անում:

55 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա* (նախադասությունները կետադրված չեն):**

1) Հենց վերջին զարգացումները այն մասին են վկայում ինչից խուսափում էին բոլորը:
2) Երանի նրանց որ հավատում են հաշտ ու խաղաղ ապրող մարդկության գալուն:
3) Թող կատակներդ որքան հասկանում ես բոլորովին դրանց ժամանակը չէ:
4) Վերջին իրադարձությունները միջնորդ երկրների ջանքերը գուցե վերջ դնեն հակամարտությանը:

56 **Ընդգծված բառերի ձևաբանական վերլուծության մեջ ո՞ր շարքում սխալ կա:**

- **Իբրև** Հիսո՞ւս ես դու **արդյոք** լյառ բարձրանում...
- Հազարավոր **չորացած** ծաղիկներ բուրում էին **խոտի** խրձերի միջից:
- Քո հոգու վրա կա մի վարագույր, **Ո՞վ** ես դու, ո՞վ ես, բնավ **չգիտեմ:**
- Քիչ անց **քամին** սաստկացավ փոթորիկ **դառնալու** չափ...

1) **քամին** – հասարակ գոյական, -*ու* հոլովում, **դառնալու** – անորոշ դերբայ
2) **իբրև** – նախադիր կապ, **արդյոք** – վերաբերական
3) **չորացած** – հարակատար դերբայ, չեզոք սեռ, **խոտի** – գոյական, *ի* հոլովում
4) **ո՞վ**– հարցական դերանուն, **չգիտեմ** – պակասավոր բայ, ըղձական եղանակ

57 **Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը ժամանակի պարագա *չէ:***

1) **Երբեմն** ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:
2) Ջրտուքի այդ **գիշերներին** լուսինը շողք էր գցում առվի մեջ:
3) **Մինչև** զառիվայրի **սկիզբը** ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով:
4) Ամպամած այդ **օրից հետո** էլ չեմ բարձրացել բրուտների ճանապարհով:

58 **Ո՞ր նախադասությունն է անդեմ:**

1) Արմենին կանչում են վարչությունից:
2) Լռություն կա Կաքավաբերդի գլխին:
3) Առարկե՞լ, չհավատա՞լ նրան:
4) Սարերում այս տարի վաղ ցրտեց:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:**

1. Երբ ձյուն է գալիս, ես դառնում եմ երազող:	ա. ենթակա
2. Հանկարծ ինձ թվաց, որ իմ շուրջը գտնվող աշխարհը խելագար պարում կործանում է իրեն:	բ. նպատակի պարագա
3. Երազում եմ, որ ոչ մի հայ չլքի իր հայրենիքը:	գ. ժամանակի պարագա
4. Անցած հուշերից հյուսում եմ մանյակ, որ պճնեմ սիրով պատկերդ տրտում:	դ. ուղիղ խնդիր

1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
2) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
3) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

60 **Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

1) *Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները, որ թաքցներ դրանց հուզաթաթավ թրթիռը:*
   Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները՝ թաքցնելու համար դրանց հուզաթաթավ թրթիռը:
2) *Ակամա սկսում ես հաշվել այն տարիները, որ ապրել ես հարազատներից հեռու:*
   Ակամա սկսում ես հաշվել հարազատներից հեռու ապրածդ տարիները:
3) *Երբ հին արկղերի մեջ ինչ-որ գիրք էի փնտրում, հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:*
   Հին արկղերի մեջ ինչ-որ գիրք փնտրելիս հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:
4) *Հրաժեշտի պահին, որպեսզի թաքցնեմ աչքերիս մեջ լճացող արցունքները, նետվեցի մորս գիրկը:*
   Հրաժեշտի պահին, աչքերիս մեջ լճացող արցունքները թաքցնելով, նետվեցի մորս գիրկը:

61 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչից հետո ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Լույս է տեսնում նրա առաջին լուրջ երկը «Ռուզան» պատմական դրաման և *Մուրացան* կեղծանունը շատ արագ հայտնի է դառնում:
2) Բանաստեղծի դստեր Նվարդ Թումանյանի գրի առած զրույցներից ենք իմանում որ Թումանյանը շարունակ անդրադարձել է այդ խնդիրներին:
3) Հայ դրամատուրգիայի մյուս մեծությունը Շիրվանզադեն էլ է կրել եվրոպական դրամատուրգիայի ազդեցությունը:
4) Իր սիրո երգերում զգացմունքները բնության պատկերներով է զուգորդել նաև սիրո մեծ երգիչը Իսահակյանը հետևելով ժողովրդական երգերի ավանդույթներին:

62 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

…Նրանից առաջ կային աստվածներ՝
Երկրնքի, սիրո, պտղավորումի,
Ինչպես փոթորկի, նաև… դպրության:

Եվ բոլորը՝ մինչևիսկ ստույգ,
Վերջինքս սուտ էր, սուտ ստուգապես.
Աստված կար, սակայն դպրություն չկա՞ր:

1) Դանիել Վարուժան, «Հարճը
2) Պարույր Սևակ, «Անլռելի զանգակատուն»
3) Պարույր Սևակ, «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»
4) Լևոն Շանթ, «Հին աստվածներ»

63 **Երկտող տներից կազմված բանաստեղծությունը, որում տների երկրորդ տողերը հանգավորվում են առաջին տան տողերի հետ, կոչվում է՝**

1) գազել
2) սոնետ
3) հայրեն
4) տրիոլետ

64 **Քանի՞ բառակապակցության մեջ մեծատառի գործածության հետ կապված սխալ կա.**

Նոբելյան Կոմիտե, Թուրքմենչայի պայմանագիր, Թուխմանուկ վանք, Էկվադորի հանրապետություն, Բենիլյուքսի Երկրներ, Բևեռային աստղ, Պիպին կարճահասակ, Բուլոնյան Անտառ, Բյուրականի աստղադիտարան, Եվրասիական տնտեսական համագործակցություն:

65 **Բառերից քանիսի՞ արմատին կարող է միանալ -*վածք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

կավաշեն, վերադառնալ, արևայրուք, միակտուր, մենախոսական, կիսափուլ, բառակազմիչ, բնագիր, խառնիխուռն, սրտաբացություն:

66 **Միայն արևմտահայերենին բնորոշ քանի՞ բառ կամ բառաձև կա տրված հատվածում:**

Աստղերը լուռ կը հային
Մութին մեջ մինչև առտու.
Նման ցավոտ սրտերու,
Ուր թաղված են առանձին…

67 **Նշել այն հատվածների համարները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են:**

1. Առաջին շողքը խուտուտ է տալիս,
   Շոշափում նրա շրթունքները փակ:
2. Ժամանակն այսպես գալիս է, գնում,
   Եվ տարու վրա ծալվում է տարին…
3. Թեղին անտարբեր ականջ էր դնում
   Տապալված կաղնու խուլ հառաչանքին:
4. Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի,
   Երկինքն էլ երբեք չի տեսել նրան:

68 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

Քաղաքը, ուր անցավ իմ ոսկեծամ մանկությունը, հիմա ապրում է իմ հոգում, շատ հաճախ հուշերիս մեջ մշուշային գծերով ժպտում է ու ինձ տանում դեպի իմ հայրենի բնօրրանը:

1. **ժպտում է** – պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
2. **հայրենի** – որոշիչ, **դեպի բնօրրանը** – տեղի պարագա
3. **ուր** – տեղի պարագա, **անցավ** – պարզ ստորոգյալ
4. **իմ** – հատկացուցիչ, **ոսկեծամ** – որոշիչ
5. **մանկությունը** – ուղիղ խնդիր, **մշուշային**– որոշիչ

69 **Նշել թվերը՝ ըստ Միսաք Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծության տների ճիշտ հաջորդականության:**

1. Ու լույսն անոնց՝ անխոս հուրի՞ դյութական,
   Հրմայագեղ ու վարսքերով արծաթե,
   Շատրրվանին կ՝իջնե գուռին մեջ կաթե:
2. Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
   Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
   Հոգիներուն կ՝իջնե երազ մը բուրյան,
   Ի՞նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե:
3. Ջուրը ցայտքեն ծաղիկ-ծաղիկ կը կաթե.
   Վրճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
   Նրվագն անոր կը հեծեծե հեշտական:
4. Աքասիաներ՝ գինով լույսե ու տապե,
   Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան.
   Մինչ կը ճյունե ծաղիկն իրենց հոտևան,
   Ջոր խոլաբար հովը գրկել կը շտապե:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բացառական հոլովի հետ գործածվող կապերից են ***առաջ, դեպի, դուրս, վեր, վերև, հեռու, անկախ, շուտ*** և այլն:
2. Միևնույն բառը կարող է լինել և՛ կապ, և՛ շաղկապ՝ նայած կիրառության:
3. Կապերը չեն կարող գործածվել գործիական հոլովով դրված բառի հետ:
4. Կապով ձևավորված կապակցությունը կարող է լինել և՛ բայական, և՛ գոյականական անդամի լրացում:
5. Ինչպես կապերը, այնպես էլ շաղկապները կապակցում են բառեր կամ նախադասություններ:
6. Կապերը չեն կարող ստանալ ***ս, դ*** հոդեր: